ՆՈՐ-ԴԱՐ

№ 111. ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Հինգշաբթի 5 Յուլիսի **1884** Հինգշաբթի 5 Յուլիսի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 111

Տարեկան 10 բուբլի. վեց ամիսը՝ 6 բուբլի. երկ. ամիսը՝ 3 բ. 50 կ.
Հատուկ 5 կոպեկի.
Բաժանորդ ղրկումն Թիֆլիսում՝ վճիռքն խմբագրատանը։

Խմբագրութիւնն Հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Titlis, Rédaction „Nor-Dar“.

Տպագրութիւնը բաց է ամէն օր (բացի ամէն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամէն ժամերով։
Յայտարարութեան վճարը բաւին 2 կ. բեկլամներն համար՝ կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Ձեմարանը և Ս. Սինոդը։
Քրոնիկոն.—Այլ և այլք։—Օրուայ խնդրի մի կողմը։—Գործակատարութիւնը մեր մէջ։—Դինու պղտորելու առթիւ։
Թղթակցութիւններ. — Նուռնուց։
Քաղաքական.—Լուրեր։
Հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Բանասիրական.—Հարուստները զուարճանում են։

«Նոր-Դար»-ին բաժանորդ գրուել կարելի է կէս տարով՝ յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը։ ԱՅՍ ՏԱՐՈՒԱՑ բաժանորդագինն է —6 ՐՈՒԲԼԻ։ Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան հեռաձայ Հասցէով. Тифлисъ, редакція „Норъ-Даръ“.

Խնդրում ենք հասցնել «Նոր-Դար»-ի խմբագրութեան—ապառիկ մնացած բաժանորդագները։

«Նոր-Դար»-ի խմբագրութիւնը իր նախկին բնակարանից տեղափոխուել է, փողը ինչ ցածր՝ ՐԱ-ՋԱՐՆԱՅԱՆ փողոց, իշխանուհի Էրիստովի տունը, № 20.

Թիֆլիս, 4 յուլիսի 1884

ՁԵՄԱՐԱՆԸ ԵՒ Ս. ՍԻՆՕԴԸ

Մեր ժողովրդի մէջ մի տեսակ մարդիկ կան, որոնք արդէն շատ վաղուց է որ աշխատել են և աշխատում են այսօր էլ մեր բարձր հոգևորականութեան անունը, վարկը կոտրելու, ս. Էջմիածինը և նրա բարձր նշանակութիւնը նսեմացնելու չար նպատակով միասին։ Ուշադրաբար, մեր մամուլի մեկ մասն էլ կեղծ ազատամտութեան անունով կամ մասնաւոր կապրիզներից դրդած քիչ չէ յաջողեցրել մեր եկեղեցու թշնամիների այդ գործը։

Այսօր մեր ժողովուրդը դէպի ս. Էջմիածինը, դէպի մեր բարձր հոգևորականութիւնը, դէպի ս. Սինօդը այնպէս է տրամադրուած, որ նրանց մասին ինչ անմիտ լուր, ինչ անհաւատալի գործ, ինչ սոսկալի բան էլ որ լսէ, իսկոյն պատրաստ է հաւատալու։

Մեր հոգևորականութիւնը ժողովրդի աչքում ծաղրելի, տեսիլ անելը մի տեսակ քաջութիւն է համարվում այսօր, և նոյն իսկ նրանք, որոնք ամենից աւելի են աջակցում այս կամ այն եկեղեցական եղծումներին, նրանք են որ աւելի բարձրաձայն դատապարտում են մեր հոգևորականութիւնը իբր արարքների համար։

Ս. Սինօդին լաւ յայտնի պէտք է լինի ժողովրդի արդի տրամադրութիւնը դէպի ս. Էջմիածինը։ Գանի որ Մայր-Աթոռը թափուր է մնում և ազգը սպասում է իր կաթողիկոսին, պարզ է, որ իրաքանչիւր սխալ, իրաքանչիւր անախորժ անցք, որ տեղի է ունենում ս. Էջմիածնում, ազգը աւելի տհաճութեամբ պիտի լսէ, աւելի պիտի վրդովէ նրան, և այդ ամենը պիտի բարձրանայ ս. Սինօդի վրայ։

Նրանք, որոնց պաշտօնն է ս. Էջմիածնի, Միաբանութեան, ս. Սինօդի վարկը ժողովրդի աչքում ձգել աշխատելու, նրանց համար Ձեմարանի տարտամ վիճակը մի երկնային պարգև է, մի ուրախալի առիթ է։

Մենք նախընթաց համարներից մէկում յայտնեցինք, որ Ձեմարանի տեսուչը ստիպուած հրաժարուել է, և աւելացրինք թէ Ձեմարանի գործերին մօտիկ ծանօթը հասկանում է թէ ինչ է նշանակում տեսչի հրաժարականը։

Մի տեսակ երկիւղով յայտնած մեր միտքը ս. Էջմիածնից հեռագրհեակ ստացած տեղեկութիւնները աւելի հաստատեցին։

Երբ Ձեմարանի յայտնի ուսուցիչներն, որոնց համար տեսչի հրաժարականը մի չնպատած, ասենք, և չը նախատեսած դէպք էր, իրենց արած հրաւէրքին պատասխանում են մի շատ հասարակ և ամենին հասկանալի հարցմունքով. թէ ով է լինելու տեսուչ։ Երբ ասում ենք, այսպիսի համեստ հարցմունքին հետևում է ս. Սինօդի նախանձամ կողմից հետևեալ հեռագիրը. «դուք արձակուած էք, տեսչին ծանուցելու համար չէիք հրաւիրուած այլ Ձեմարանին»— այսպիսի վարմունքը իրաւունք է տալիս մեզ հաւատալու այն լուրը, որ մենք լսում էինք բայց չէինք հաւատում. որպէս թէ ս. Սինոդը պատճառներ է ստեղծում, առիթներ է որոնում, որ Ձեմարանի այժմեան ուսուցչական խումբը հեռացնէ Ձեմարանից։ Մինչև օրս այժմեան խումբը իր տեսչով յայտնի է եղել ազգի առաջ իբրև մի ընտիր խումբ. և վայելել է ընդհանուրի յարգանքը։

Եթէ այս կամ այն մասնաւոր դէպքը դանագան դժգոհութիւններ են առաջ բերել, բայց դրանք ժամանակաւոր են եղել և հասարակութեան առաջ ոչ երևացել են և ոչ էլ նշանակութիւն ստել։

Ձեմարանի այժմեան խումբը, որքան մեզ յայտնի է, միմիայն մի բանում իր դէմ է յարուցել, եթէ այսպէս կարելի է ասել, ընդհանուրի դժգոհութիւնը—դա ռոճկի խնդիրն էր։

Որ կողմը շուռ գայիք, կը լսէիք գանգատներ այդ մասին. ուսուցչական խումբը ահագին ռոճիկներ է սահմանում, Ձեմարանը ծծում է մեծ տեղերի գպրոցների արդիւնքը, Ձեմարանի ուսուցիչներն անխիղճ են, որ այդպիսի մեծ ռոճիկներ են կորզում ս. Էջմիածնից...

Մենք այդ ռոճիկների մասին բոլորովին ուրիշ կարծիք ունինք և ուրիշ տեսակէտից ենք նայում այդ ռոճիկների վրայ։

Ձենք ասում, որ անպատճառ պէտք է 5000, 4000, 3000 րուբլիներով ռոճիկ տալ, բայց եթէ ուսուցչական խումբը ընտիր է, եթէ նա լաւ աշխատում է, եթէ նա լաւ արդիւնքներ է ցոյց տալիս, կարծում ենք որ ուսումնական մասի վրայ մի տասը հազար աւելի ծախսը մի կորուստ չէ, որի համար հարկաւոր լինեը այդչափ ազմուկ հանել։

Մեր ազգը հարուստ չէ, մեր եկեղեցին նոյնպէս կալուածներով և մեծ եկամուտներով չէ ծանրաբեռնուած, ուստի խնայողութիւնը լաւ բան է նոյն իսկ գպրոցական գործում։

Բայց եթէ ս. Սինօդը խնայողութիւն է ուզում անել, աւելի լաւ կը լինէը որ ուրիշ տեղերից սկսէր այդ։

Իսկ այժմ այդ մասին էլ խօսք չի կարող լինել, որովհետև Ձեմարանի ուսուցչական խումբը տեսչից սկսած յօժարակամ մեծ զիջումներ էր արել և աւելի սակաս ռոճիկով համաձայնուել էր ծառայելու Ձեմարանին Տեղապահ Մակար արքազանի նախաձեռնութեամբ։

Ուրեմն ինչն է պատճառը, որ ս. Սինօդը այդպիսի մի յայտնի խումբ հաճութեամբ ճանապարհ է ձգում և հայր Խորէն Ստեփանէին աղարկում է Թիֆլիս որպէս զի սա նոր ուսուցչական խումբ կազմէ Ձեմարանի համար։

Ս. Սինօդը պէտք է իմանայ որ, «Նոր-Դար»-ը ազգին և եկեղեցուն նուիրուած հաւատարիմ ծառան է և միշտ նրա սպասաւորների պատուին նախանձախնդիր. պէտք է իմանայ նա, որ «Նոր-Դար»-ը պատրաստ է ազգի և եկեղեցու համար զոհելու որ և է անձնաւորութիւն, որքան էլ դա բարձր կանգնած և գորեղ լինէը, որքան էլ որ այդ վարմունքը կորստաբեր լինէը «Նոր-Դար»-ի համար։

Արդ՝ «Նոր-Դար»-ի համար Ձեմարանի ուսուցչական խումբը նշանակութիւն չունի, նա կամենում է միայն, որ այդ հաստատութիւնը կանգուն մնայ, որպէս զի և՛

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ ԶՈՒԱՐՃԱՆՈՒՄ ԵՆ.

Առաջին հանդիսացան.

—

Դաբանային սրտուն երեկոյ էր։ Արեգակը խոնարհում էր դէպի իւր մուտքը։ Օգը թեպետ մի փոքր սօթայնն, սակայն քաղցրաշունչ հովը բարեխառնում էր նրան և խիստ ախորժելի զարձնում զբօսասէր բազմութեանը, որը ցուած էր Աւէքսանդրեան այգու Ձեմելիքները։ „Ազնուականական“ կոչուած բարձրադիր ծառուղին գրեթէ խեղդուած էր զբօսնողներով՝ շատութեամբ։ Գեղեցիկ հագնուած տիկիններ, վերջին սարազով պչրուած օրիորդներ, նրբաճաշակ երիտասարդներ—հոկուած Փարիզի նորութեանց համեմատ, մինչ չորութիւնները և սկանդալները անելու համար պատրաստ ուսանողներ և վերջիններին պաշտող ուսանողուհիներ, բոլորն էլ խառն ի խուռն զբօսնում էին այդտեղ։ Նրանց անընդհատ անցուգարձը նմանվում էր մի հանդիսաւոր կապրիզի, որը պարում են հարուստ իշխանի դահլիճում նրա բազմաթիւ հիւրերը։

„Ազնուականական“ ծառուղում ապրելուած չէը, և հարկէ, և ազգասանիներին զբօսնելու, միայն թէ նրանք քաղաքավարութեամբ խոյս էին տալիս դէպի մենաւոր Ձեմելիքները, որպէս զի իրենց ներկայութեամբ չը խանգարեն հարուստների, կամ գոնէ հարուստ ելևէջացողների, զուարճութիւնը։ Հագուստի անշնորհքութիւնը տիրապետում էր նրանց չքեղութեան աչքից հեռու պատելու։ Իսկ նրանք, որոնք թէպէտ աղքատ, բայց շնորհքով էին հագնուած, կարծէք չը կայ, զբօսարանական մըրցումից չէին վախենում։

Այս վերջիններն թուին պատկանում էին տիկին Բերնարի երեք նորատի կրտղուհիները։ Սրանք բոլորն էլ հայուհիները էին, սեղմ ընտանեաց աղջիկներ, որոնք կարանոցում հինց նոր էին աւարտել մի մեծ աշխատանք և Տիկին Բերնարը արձակել էր նրանց մի վոքր ժամանակով այգիում զբօսնելու համար։

Հեղինէն, որին իւր ընկերուհիները Ելենա էին կոչում, իւր ընկերուհիների մէջ վայելում էր իւր արտաքոյ կարգի գեղեցկութեամբ։ Նրա բարձր հասակը, չնորհալի քալուածքը, և մանաւանդ երկարաձիգ արտահանութիւններով եզերուած կախարդող հայեացքը գրաւել էին զբօսնողների ուշադրութիւնը։

Նրա դէմքի իւրաքանչիւր չարժուածքը, նրա նրբաձայն ծիծաղը, նրա խոսակցութիւնը պիտում և գննում էին հարիւրաւոր աչքեր։ Հեղինէն ընկերուհիները, որոնք աւելի զարգացած էին այդ բաները նկատելու համար, հասկացնում էին նրան և սա ընդ ակամբ գննում էր այդ բոլորը և հրճուում կատարեալ երեխայական անմեղութեամբ։ Բայց նա չէը տեսնում թէ ինչպիսի նախանձոտ հայեացքներ էին գցում իւր վրայ շրեղ հագնուած, բայց ոչ գեղեցիկ տիկինները և օրիորդները, մանաւանդ երբ սրանց երիտասարդ ասպետները հետաքրքրութեամբ մասնացոյց էին անում իւր վրայ և ցանկութիւն էին յայտնում իւր մոտ լինելը նմանուելու համար։

—„Ո՛վ պէտք է լինի, մի անառակ աղջիկ“ պատասխանում էին նրանց օրիորդ— տիկինները, արհամարհական հայեացք ձգելով Հեղինէի վրայ։

—„Մի անառակ աղջիկ“. Եւ ինչպէս չուտ և սահուն դերպով արտասանում է այդ բառերը կնոջ քնքոյշ բերանը. ինչպէս պատրաստ է նա առանց լողհահարուելու ցեխատել իւր ցեղի ամենաանարատ հոգին, եթէ սա յանգգնում է՝ իւր խնդութեան մէջ՝ մի բանով գերազանցել իրենից, եթէ նրա ճշմարիտ արժանիքը ձնշում է զգայուն սրտերը և խլում է իրենց գօտով վաստակած երկրպագուներին։

Բայց Հեղինէն „անառակ աղջիկ“ չէը. նրա արտաքին գեղեցկութեան տակ պեպեցիկ էր և նրա հոգին։ Նա բարի էր ինչպէս հրեշտակ և առաքինի ինչպէս անապատի միանձնուհին։

Դուք կարող էք կարծել՝ որ ես չափազանցում եմ, որովհետև այս քաղաքի մէջ մեր օրով հազուագիւտ են այդ յատկութեանց տէր ազջիկները, մանաւանդ երբ դրանք աշխատում են նաւասեղ երբ դրանք աշխատում են կարանոցներում։ Բայց ես խնդրն կը-ծանօթացնեմ ձեզ նրա հետ։ Հեղինէն Թիֆլիսեցի չէը։ Նրա ծնողները նոր էին գաղթել այստեղ մի գաւառական քաղաքից։ Նրանք շատ պարկեշտ մարդիկներ էին, և Հեղինէն կրթուելով նրանց հոգատարութեան տակ, պարզ է, որ բոլորովին չափսի նմանէը այստեղացիներին։ Հեղինէի հայրը պարապում էր հիւանդութեամբ, մայրը մերձակայ հարուստ տներում լուացարարութիւն էր անում, իսկ երեն, մի քանի ամիս էր՝ ինչ որ առել էին տիկին Բերնարի մօտ կար ու ձև սովորելու։ Հեղինէն այդտեղ էլ մի քանի ուրիշ աղջիկների պէս առաւում, ուտում և հագնըվում էր տ. Բերնարի հաշուով, և միայն կիւրակէ օրերը գնում էր իւր ծնողացը այցելելու։

Հասարակութիւնը, որի մէջ ապրում էր նա և որը բաղկացած էր աղքատ ընտանեաց աղջիկներից, կարող էր, վնասատուր լինել Հեղինէի պէս մի անփորձ աղջկան համար։ Յաճախ նա լսում էր իւր ականջների համար բոլորովին նորերի պայտներ, անպատկառ խօսակցութիւններ, որոնք առ հասարակ անպակաս են լինում կարանոցներում։ Բայց նա կարողանում էր տիրել իրեն։ Նա զգում էր, և այդ տեսակ անախորժ վայրապտութիւնները չլսելու համար՝ քաշվում էր կարանոցի մի հեռաւոր անկիւնը և լուռ ու մունջ կարում էր իւր գործը։ Բայց միշտ այդպէս վարուել նրան չէը յաջողում։ Պատահում էր որ նա ստիպուած էր լինում կորել մի մեծ գործ, երեք չորս աղջիկների հետ միասին, որոնք այդ ժամանակ էլ չարութիւնից իրենց վայրապտութիւնները, մանաւանդ երբ տ. Բերնարը այստեղ չէը լինում։ Այդպիսի դէպքերում Հեղինէն գործ էր դնում իւր բոլոր ոյժը՝ այդ աղջիկների մէջ ամօթի զգացմունքը զարթեցնելու համար, և նրա ջանքը երբեմն պսակվում էր յաջողութեամբ։

Բոլոր կարողների մէջ նա միայն երկու աղջիկների հաւանէը, որոնք թէ բնաւորութեամբ և թէ աշխատասիրութեամբ նմանում էին իրեն։ Դրանցից մէկը Նինօն էր, խառատ Օսկվի աղջիկը, որ թէպէտ մի առանձին գեղեցկութիւն չունէը, բայց յայտնի էր իւր չափազանց բարի և ազնիւ բնաւորութեամբ. իսկ միւսը պատուական Աւէքսի Թոռը Շուշանը, որ մեծ հեղինակութիւն ունէը կորա-

եկեղեցու թշնամիները և նրա սպասաւորների անուանարկողներն առիթի չունենան խնդալու, առիթի չունենան ժողովուրդը մոլորեցնելու։

Հաւատացնում ենք ս. Սինոդին, որ Թիֆլիս մարդ ուղարկելով Ձեմարանի համար լաւ խոհարարներ էլ չեն գտնիլ, ուր մնաց թէ լաւ ուսուցիչներ. լաւ ուսուցիչներն էլ փողոցներում վայր թափուած չեն, թմոլ Հաւատան մեզ։

Հաւատացնում ենք, որ այդ ամենից ոչինչ չի լինելու, ամեն բան կը քանգաւի. այդպիսով ս. Սինոդի և Մխարանութեան թշնամիների ձեռքում միմիայն շատ սուր զէնք է պիտում։

Հաւատացնում ենք ս. Սինոդին, որ այժմս Ձեմարանի յայտնի խմբից աւելի լաւ ուսուցչական խումբ կազմելը անկարելի է։

Աւելի լաւ կանէ, որ ս. Սինոդը պահպանէ Ձեմարանը և մինչև նոր կաթողիկոսի գալը կառավարէ Ձեմարանը այն խմբով, որը մինչև օրս գործել է ի Տէր Հանդուցեալ կաթողիկոսի հրաւէրով և կամքով։

Յայս ունինք, որ ս. Սինոդը կաշխատէ հեռացնել այն տարաձայնութիւնները, որ ծագել են ուսուցչական խմբի և ս. Սինոդի մէջ, և այդպիսով ոչ նոր ուսուցչական խումբ կազմելու Հարկաւորութիւն կը լինի և ոչ էլ նոր խռովութիւնների դուռը կը բացուի։

Երբ եկեղեցու պետը դայ, պէտք է ս. Էջմիածնում խաղաղութիւնը և կարգը տիրում լինի – այդ է ուզում ազգը։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԵՒԱՆԻՑ. Յունիսի 25 ից սկսուելով 28-ին աւարտուեցան Նորք քաղաքամասնի երկսեռ դպրոցաց հարցաքննութիւնները, որոնց ներկայ էր սրբազան առաջնորդն տնօրինութեամբ Հայր Յովսէփ աւագ քահանայ Մելեանի։ Քննութիւններն ներկայ էին գասնվում և բոլոր հոգաբարձուք։ Պէտք է խոստովանած որ երկսեռ դպրոցները զարմանալի յառաջադէմ են։ Հայր Վահան տէր Յովհաննիսեան գործով ապացուցեց որ իսկական և բարեխիղճ աշխատանքն է միայն չշահելը արդիւնքները արտադրում։ Թող երեց անձին տարօրինութիւնը չը համարեն Երևան քաղաքի դպրոցաց ու դպրանոցի գիտնական տեսուչները աշխատանաց օրինակ վերցնել Նորքից և բարեկործէն գործելու դասը առնել հայր Վահանից։ Յարգ և պատիւ այդ աշխատաւոր գործողին։

—

Նոյն տեղից. Այս տարի յունիս ամիսն անցաւ զարմանալի հով ու գով կերպով։ Համաբեայ ամեն օր անպակաս էին անձրևները։ Պատմում են որ այսպիսի յունիս տեսնուած չէ Երևանում։ Մեր մօտերքում հնձերն արդէն սկսուած են։ Ցորենը—պէտք է յուսալ որ արժան կը լինի։ Խաղողի բերքը պտուղներից մի քանիսը խիստ առատ։ Երևանցիք առ հասարակ շատ գոհ (?) են և համակրում (?) ս. Սինոդի վերջին կարգադրութեանը Ձեմարանի վերաբերութեամբ։ Ժամանակաւոր տեսուչ—ասում են—Հրաւիրելու են Սբբազան Ազաթիրեանցին։ Նախկին խմբից հրաժարացնելու են միայն Կոստանեանին և Վարգահեանին։ Մնացեալը, եթէ կամին, կարող են մնալ։ *)

—

Մեզ գրում են. Ամսոյս 8-ին կիւրակէ օրը, 9 ժամին Հաւատարի Սբբ. Կարապետ եկեղեցւոյ երէցփոխանի ընտրութիւն պէտք է լինի, ուստի սրանով հրաւիրվում են յիշեալ եկեղեցւոյ ծխական և ժամաւոր ժողովրդականները նոյն ժամին, Սբբ. պատարագից յետոյ, ընտրութեանը մասնակցելու։ Եթէ նրա ծխականներից մի քանի յայտնի անձինք այդ օրը կրձգտեն ժողովը աղբամկելու, ինչպէս մի քանի անգամ վարուել են, այն ժամանակ մենք նրանց հետ կը վարուենք մի այլ եղանակով, որի մասին պէտք եղած միջոցները հոգացուել է։ Վերատեսչ բարեկարգութեան եկեղեցւոյ Հայոց Տիխոնայ Մուշէղ քահանայ տէր Պետրոսեան։

*) Մենք զոհ չենք այդ կարգադրութիւնից, և ինչ ուսուցիչները ունինք, որ եղածների հետ էլ այդպէս են վարվում։ Խմբ։

„Кассій“ լրագիրը հաղորդում է, որ ուրբաթ՝ յունիսի 29-ին, Սև քաղաքի նաւահանգստից ոչ հեռու քամին տապալեց մի նաւակ, որի մէջ գտնվում էին պաշտօնաթող եղած մայոր Ֆօն-Կլիւկէն, Տրանզուեղ չոգենաւի հրամանատար Կրէյսմանը և երկու նաւասաններ։ Ֆօն—Կլիւկէն և մի նաւասան լեզդուեցան, իսկ Կրէյսմանը և միւս նաւասանն ,,Աարեկ'' չոգենաւի օգնութեամբը ազատուեցան, որ պատահմամբ է ,,Լերեզ'' չոգենաւային ընկերութեանը։

—

Ֆրանսիական լրագիրների Մարսէլից ստացած հեռագիրներում, յունիսի 23-ից, հաղորդում են, որ գօլտոը Կօլոը Փարիզից Ճանապարհ է ընկել, որտեղ նրան ընդունել է մինիստրութեան խորհրդի նախագահ Ժիւլ Ֆերրին և Տուլօնում երկարատև խորհրդակցութիւն է ունեցել գօլտոը Բրուաղելի հետ։

Երկաթուղու կայարանում նրան սպասում էր Ծովային վարչութեան բժիշկ՝ գօլտոր Բուվենը։ Պ. Կօլոը, տեղ ժամանելուն պէս՝ խորհրդակցութիւն է ունեցել գօլտոր Շորաուսի հետ, որի հետ միասին և կամենում է աշխատել։ Տուլօնի գազային ընկերութիւնը նախընթաց երկոյեան 2 հազար լիտր կոտոր այրեց և պատրաստվում էր նոյնը կրկնել և յունիսի 23։

—

Վ.Ա.Գ.Ա.Ր.Շ.Ա.Պ.Ա.Տ.Ի.Ց մեզ գրում են, որ ամենին և ամեն տեղ վաղուց յայտնի Խորէն վ. Սահակեանին ս. Սինոդի կարգադրութեամբ եկել է Թիֆլիս Ձեմարանի համար նոր ուսուցչական խումբ հրաւիրելու համար։

ՕՐՈՒԱՅ ԽՆԴՐԻ ՄԻ ԿՈՂՐ

„Նոր-Դար“-ը շատ ուղիղ է նկատում Ձեմարանի վրայ խօսելիս (,,Նոր-Դար“, № 106), թէ „Ներ տեսուչ չ'կայ, կը նշանակէ ուսուցչական խումբ էլ չ'կայ։ Որովհետև ուսուցչական խումբը կազմուելուց առաջ նրան պէտք է նախ յայտնի լինի թէ ով է տեսուչը“։

Աշխարհիս ամեն դպրոցական օրէնքների զօրութեամբ ուսուցիչ հրաւիրողը տեսուչն է, ուր որ դպրոցի մէջ տեսչական պաշտօն կայ։ Տեսուչը վարժարանի անմիջական դեկավարն է. նրա հրամութեանից, կրթութեան աստիճանից, նրա եռանդից և բնաւորութիւնից է կախուած ըստ մեծ մասին նրա աւագնորդած վարժարանի այս կամ այն ուղղութիւնը, աշակերտների և ուսուցիչների յարաբերութեանց եղանակը, դպրոցի ուսումնական և բարոյական վիճակը, դրա մէջ տիրապետող ոգին և այլն։ Տեսուչը հոգատար հօր պաշտօն է վարում իւրաքանչիւր աշակերտի վերաբերմամբ. նրա խնամքին է յանձնուած հարիւրաւոր մանուկների ճակատագիրը, չարն ու բարին. նա հարազատ ընկեր պիտի լինի ամեն մի պաշտօնակցի. նա պիտի առաջնորդէ ուսուցիչներին, հրահանգ տայ վերակացուներին. նա պիտի նախագահէ մանկավարժական ժողովներին, հաշտեցնէ դրանց մէջ ծագող հակառակ կարծիքները, միութեան ոգի ներշնչէ և վարժարանի օգտին ծառայեցնէ ամենքին։ Նա է անմիջական միջնորդը վարժարանի և հասարակութեան մէջ. նա է... սակայն ես մտադիր չեմ մանրամասն յիշատակել այստեղ տեսչական պարտաւորութիւնները և նրա պաշտօնի նորհուրդը։ Կասեմ միայն, որ ընչքան էլ դրանք ծանր լինէին առ հասարակ,—հազարապատիկ առաւել ծանր են ի մասնաւորի Ձեմարանի նման մի փակ հիմնարկութեան տեսչի պարտաւորութիւնները։

Այդ Ձեմարանի անցեալ կեանքին դէմ մտքը ի շատ տեղեակ մարդն միայն կարող է համառել, թէ ինչ եզակատական տժժանելի գոյն է կառավարել մի ահագին վարժարան վարպետապատ ոչխ մի տնկիւնում և տարտար պահել նրան այդ տարօրինակ գիւղի ապրելութիւններից...

Ձեմարանը սկեսական հաստատութիւն չէ. դրա ուսուցիչները հրաւիրվում են տեսչի և իրենց միջոցով համաձայնութեամբ, յօժարակամ և ազատ, բացի կրօնաւոր ուսուցիչներից։ Այդպէս էր հանդուցեալ հիմնադիր Հայրապետ օրով։ Ստիպել մեկին՝ դալ ծառայել մի վարժարանի, միևնոյնն տա տեսուչ չ'ուզի, կամ թէ ի յանգամս վերագրել մեկին լինելոց տեսչի գէթ անունն համառելու ցանկութիւնը, ինչպէս որ պատահեցաւ նորերումս,—այդ առ նուազն մի տարօրինակ երեւոյթ է...

Իւրաքանչիւր տղեղ ուսուցիչ, որ ի սրտէ կամենում է իւր կարողութեան չափով օգտաւէտ լինել մի դպրոցական հաստատութեան և մինչև այժմս էլ սրբութեամբ և պատուով ծառայել է դրան ամբողջ երեք տարի, իրաւունք ունի, մանաւանդ ներկայ հանգամանքներում, հարցնել և համառել, թէ ով կլինի դրա տեսուչը։ Ինչ է որ իրաւունք ունի,—այլ դեռ անշուշտ պարտական է գնահատել, թէ արդեօք այդ տեսուչը Ձեմարանի կանոնադրութեան ամեն մի կէտի իրագործմանը նախանձախնդիր կլինի թէ ոչ։ Արդեօք նա մի խաղաղասէր անձ կլինի թէ խառնակիչ,—արդեօք կրթութիւն ունեցող և ուսումնական ասպարէզի վրայ տեղեակ մի մանկավարժ թէ մի անկիրթ եկուոր,—արդեօք հասարակութեան յարգն ու պատիւը վայելող մի կրօնաւոր թէ մի ջրկոմոլիկ,—արդեօք վարժարանի շահերի պաշտպանող, միայն նրա օգտին անհնչէը մի ագնիւ մարդ թէ ի միում վարժարանի լոկ իւր անձնական հաշիւներին հետամուտ մի բանտոնդիր։

Այդ հարցմունքները կարելի էր յանվերջ շարունակել մանաւանդ Ձեմարանի առագայ տեսչի նկատմամբ, որ ինչքան էլ ազնիւ և հմուտ մարդ լինի, դարձեալ շատ բացառիկ պայմանների մէջ պիտի պաշտօն վարէ։ Յայտնի է որ Ձեմարանը, երբև մի մանուկ հաստատութիւն, տակաւին մի որոշ և մշակուած ուսումնական ծրագիր չունի, յայտնի է, որ պ. Նահապետեանի տեսչութիւնից առաջ այնտեղ երբեմն այնպիսի առարկաներ են աւանդուել, որոնք Ձեմարանի նպատակին բնաւ չեն կարող ծառայել—օրինակ՝ պատմութիւն, երկրագիտութիւն և այլն։ Երկար անցեալ ունեցող վարժարաններն արդէն ժամանակով սրբագործուած և փորձով վաւերացուած պրօգրամներ ունին. նրանց տեսուչները պարտական են խստիւ հետևել այդ պրօգրամներին, որպէս զի վարժարանի մէջ ուսումն արդէն սովորական կարգով յառաջ բնթանայ։ Այլ են Ձեմարանի հանգամանքները, ուր տեսուչը կամ պատասխանատու նախագահ ու հրահանգ չունի նենալուց կամ թէ Ձեռնհաս վարժապետների պակասութիւն զգալուց ստիպուած է լինում եղած վարժապետների աջակցութեամբ յարմարցնել Ձեմարանի նպատակին ուսանելի առարկաների տեսակն և չափը։ Այդ մի շատ գժուար խնդիր է, որի վրայ շատ տքնեցան և աշխատեցան Ձեմարանի նոցի մէջ, երբև ամենից աւելի յառաջադէմ և լաւ կարող աղջիկ։ Այդ երկուսին էլ Հեղինէն իւր համար մշտական ընկերուհիները ընտրեց։ Նրանք երեքն էլ մինչև ամենից չափից դուրս սիրում էին, սեղանի վրայ մեշտ մեսասին էլին նստում, մեծ գործերը մեսասին կարում և ազատ ժամանակները մեսասին ըզբօսնում։ Հենց այս օր էլ այգու մէջ դրանք երեքը մեսասին էին ման գալիս։ Բայց ինչպէս ասացինք „Ագնուականական“ ծառուղիի մէջ զբօսնողների ուշադրութիւնը միայն Հեղինէն էր գրաւած։

Երկու երևտասարդներ, որոնցից մէկը աւելի աչքի էր ընկնում իւր դէմքի և կազմուածքի գեղեցկութեամբ և հագնուած էր խիստ նուրբ Հաշակով, ուշի ուշով հետևում էին տ. Բերնարի կարողութիւններին։ Իւրաքանչիւրը անցուդարձի մէջ նրանք մի քանի անգամ պատրաստ էին գալիս երեք աղջիկներին դէմ առ դէմ պատահելու համար. և նրանց հանդիպած ժամանակ խոր ուշադրութեամբ սեւեռում էին նրանց աչքերը Հեղինէի վրայ, որը ամօթից խոյրն շատագունում էր։ Ամբողջ զբօսանքի ժամանակ մի րոպէ անգամ նրանք չհեռացան այդ աղջիկներից։ Նինոն և Շուշանը գիտէին որ երկու երիտասարդների տեզերանքը Հեղինէի համար էր, սակայն նրանք ոչ միայն չէին հանանձում նրան, այլ և այդ առիթով նրա հետ կատակները էին անում։

—Ելենա, այս երիտասարդները շատ են գրաւուել քեզմով, նրանցից մէկը անպատճառ քեզ ուղելու է, ասում էր նրան Շուշանը ծիծաղելով։

—Ինչու համար ես կարծում որ ինձ մով են գրաւուել և ոչ թէ քեզմով կամ Նինոյով, պատասխանեց Ելենան շատագունուելով։

—Ինչ հարկ կայ այդ հարցնելու. որովհետև դու աւելի գեղեցիկ ես քան թէ մենք երկուքս, շատսատ կցեց Նինոն և գաղտուկ դրեց Շուշանին։ Նրանք երկուսը միասին սկսան ծիծաղել։

—Ա՜խ Նինո, ես չէի նկատել որ ինձ մօտ այդպէս բաներ չ'ասուիր, նեզատած արտանջաց Ելենան։

—Ի սէր Աստուծոյ, Ելենա, Թողիր այդ չնմարութիւնները. մինչև ե՞րբ պիտի դու երեխայ մնաս, Թիֆլիսում չես տեսնում, ինչ է, կշտամբեց նրան Շուշանը։

—Բա արևը վիսյ, Շուշան, ես ձեր Թիֆլիսցիները պէս չեմ սիրում տղաները վրայ խօսելը, ինչ անեմ, մի բան որ ինձ դիւր չէ գալիս ես գոռով չալմոլ սիրեմ։ Ես ասվոր չեմ այդ տեսակ խօսք ու զրոյցները։

—Լաւ, լաւ. տեսնենք մինչև ե՞րբ այդպէս կելօք կմնաս, պատասխանեց նրան Շուշանը և լռեց։

—Բայց նրաւ, Ելենա, տես ինչ դեղեցիկ տղայ է այդ երիտասարդը, կրկին դիմեց նրան Նինոն ծիծաղելով, երբ երկու երիտասարդները դէմ առ դէմ հանդիպեցին նրանց։

—Ա՜խ, Նինո, դու բոլորովին գայթագնում ես ինձ, բարկացած պատասխանեց նրան Ելենան և ուղղուեցաւ դէպի պատվիրը Ճեմելիքը տուն վերադառնալու դիտաւորութեամբ։ Նինոն և Շուշանը քրքջալով հետևեցին նրան։

Բայց մի քանի քայլ հազիւ էր փոխել Ելենան, որ գեղեցիկ երիտասարդը հեռուից իւր աչքերն ընկաւ։ Նրանց հայեացքները պատահեցին միմեանց և մի քանի րոպէ դէպի երբ տեսած մնացին։ Ելենան տեսաւ որ երիտասարդը երբ շատ գեղեցիկ էր, Նինոն իրաւունք ունէր նրանով հետաքրքրուելու։ Բայց նա շատ երկար չնայեց նրան, այլ աչքերը դարձնելով շարունակեց իւր Ճանապարհը։

Իւր ընկերուհիները երկու հայեացքների միմեանց պատահելը չնկատեցին։

Երկու երիտասարդները նոյնպէս ուղղուեցան դէպի պատվիրը ծառուղին։ Նրանք հետևում էին երեք ընկերուհիներին։

—Սամուէլ, միթէ դու չես Ճանաչում այս աղջիկները, հարցնում էր գեղեցիկ երիտասարդին իւր ընկերը Մարգարը։

—Չեմ Ճանաչում. մինչև այսօր էլ տեսած չեմ։

—Զարմանք! Ինչ է պինում ուրեմն քո Սալոմէն, եթէ այսպիսի Թուչունները քեզանից անյայտ կարող են ապրել Թիֆլիսում։

—Ինչ զարմանք. նա իսս ամբողջ քաղաքը չէ Ճանաչում։

—Չէ բարեկամ, չէ. ես չեմ հաւատում թէ դու այս աղջկան տեսած չլինես. եթէ ժլատութիւն ես անում, և կամ ինդրել ես ու Ձեռքդ խաղողին չէ հասել։

—Ինչ վերաբերում է ժլատութեան, կարծում եմ դու ինքդ էլ չես կարող հաւատալ թէ երբ և իցէ ես կարող եմ ժլատ լինել։ Բայց թէ ինդրել եմ և Ձեռքս խաղողին չէ հասել, այդ ինձ համար չէ ասուած. եթէ այդպէս բան պատահելու լինի ինձ հետ, դրա առաջին անյաջողութիւնը կլինի իմ ամբողջ կեանքում։

—Պու կարող ես ապացուցանել որ այս աղջիկ վերաբերութեամբ ոչինչ անյաջող ինդրած չես արել դու։

—Ո՞րքան ժամանակ ես ապրիս ինձ։

—Մի ամիս։

Սամուէլը ոչինչ չպատասխանեց։

—Եթէ այդ քիչ է, ես մի ամիս էլ կաւելացնեմ, հեգնելով աւելացրեց Մարգարը։

—Պու այդ կտեսնես, հակիրճ պատասխանեց Սամուէլը և ոգևորելով բարեկամին հեռացաւ։

(Կը շարունակուի)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

(Ա. Ա.)

Ի՞նչ ասացեք որ չէիրտուեր ինձ ուղղակի առ ձեզ գրել, ինչպէս ես ուզէի, այլ ձեր թերթի միջոցով։ Ես ինձ հիմա ոչ մի պատճառ չեմ տեսնում, որ ձեզ չգրեմ, ինչպէս ես ուզում եմ, և ոչ էլ ինձ համար մի որ և իցէ արգելք կայ, որ ես ձեզ չգրեմ։ Ես ձեզ գրում եմ, որովհետև ես ուզում եմ գրել, և ոչ թէ որովհետև ես պարտաւոր եմ գրել։ Ես ձեզ գրում եմ, որովհետև ես ուզում եմ ձեզ հետ խօսել, ինչպէս որ ես խօսում եմ ինձ հետ, երբ ես միայնակ եմ լինում, և ոչ թէ որովհետև ես ուզում եմ ձեզ հետ խօսել, ինչպէս որ ես խօսում եմ ուրիշների հետ, որոնց հետ ես ստիպուած եմ խօս

ուրախութիւնը ընդհանուր էր. բարեկամս վախտում էր ասկանջիս. ,,Ներսէս սրբազանը չի՛ս է առել հրաժարականը՛,, ըսաք Աստուծոյ։ Նոյն օրը դպրոցների վարչութեան քարտուղարը կարդաց տնտեսական հաշիւ, անցեալ տարուան հաշուից դեսենք օր ուսումն. գանձարանը պարապ էր մնացել, իսկ ներկայում ոչ. 1883—1884 ուսումնական շրջանում, տղայոց դպրոցում աւելացել է չորրորդ, իսկ աղջկերանց դպրոցում երկրորդ դասարան, արատոյ կարգի ծախքեր են եղել, սա հաշուապահից գիտենք և գանձարանում աւելանում է մի ուսուցչի տարեթոշակ, բայց մեզանում գարձեալ մեզադրող դժնեայ հոգիները կան դպրոցների վարչութեան անդամներին և գեղապատիւ նախագահին, երբև լեհ վերջինները անտարբեր են դէպի ուսումնարանները։ Ուսումնական հաշիւը կարդաց տեսուչ Պ. Գ. Ղուլիքևխանցը։ Պ. տեսչի հաշուից իմացանք, թէ ուսումնարաններում 300-ի մօտ աշակերտներ կան, Թող ,,Նոր—Դար՚՚-ի Թղթակից Մ. գրէ քանի ախորժակ ունի, և ինչպէս ինքն է ասում իւր ձայնը, ,,ձայն բարբառոյ յանապատի՚՚ կմնայ։ Հարցանքնութիւնները, լսելով շատ լաւ է տնօրէն. անրազգաբար ներկայ լինելու պատիւ չունեցայ, մեզ ասէր է մ. ուսուցիչների բարեխղճաբար ծառայութիւնը և աշակերտաց գոհացուցիչ պատասխանները մի պարոն, լսելով գիմել է վարչութեանը և խնդրել է աւելցնել Թոշակ և ձեռքից չվռնդել ուսուցիչներին, խոստանալով Թէ աւելին ինքը կվճարէ իբեն յայտնի միջոցներից։ Դեռ. Սահմանեցին ուշադրութիւնն ենք հրաւիրում այս հարկաւոր խնդրի վրայ։ Լուր է տարածուել, Թէ տղայոց դպրոցում սեպտեմբերից կը բացուի հինգերորդ դասարան, եթէ Հնմարիստ է, փառք և պատիւ վարչութեանը։

***

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մարսէլից տատացած մանաւոր հեռագրերներն հաղորդում են, որ տեղական բժիշկները ոչ այնքան վրդովուած են խոլերայով մեռնողների Թուի մեծութեամբը, որքան այդ հիւանդութեան յատկութիւնովը։

Այդ ախտով մեռնողները գլխաւորապէս երեք ժամուայ մէջ դոհ են գնում նրան, իսկ երկու ժամ անցնելուց յետոյ՝ ամբողջ Մարմինը սևանում է և լուծվում։ Մարսէլի պաշտօնական առողջապահական յանձնաժողովի գլխաւոր բժիշկ Մետաքսասը հաղորդեց „Temps“ լրագրի գործակալին, որ ուսանող Ժերարի մահուանից անմիջապէս յետոյ նա համոզուեցաւ, որ դա ասիական խոլերայ է։ Բժիշկ Մետակսաը երկիւղ է կրում, որ եթէ ամենախիստ միջոցները չը գործադրուին դրա դէմ, ժանտախտը կարող է աւելի ևս տատականալ։ Բայց և այնպէս նա այժմ չէ կարող այնպէս տատակ լինել, ինչպէս 1865 Թուին էր, որովհետև այժմեան գործ դրած միջոցները աւելի հնմնաւոր են։ Ըը նայելով որ մինչև այժմ խոլերային զէպքերը ոչ այնքան շատ են եղել, բայց նրա առաջն առնելու համար ամեն տեսակ կարգադրութիւններ են արուած։ 250 բժիշկները յայտնեցին, որ առողջապահական կարգադրութիւնը շատ լաւ է և մանաւանդ վի օդնութիւնը աւելորդ է։

—

Տուլօնից, յունիսի 21-ից (3-ից յուլիսի), հեռագրում են „Times“-ին. ,,Տուլօնում տվորական ժամանակ բնակիչների նշանաւոր մասը կազմում են նաւաստիները, զինուորները և նավաշինա-

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

2 յուլիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յուլիսի 2-ին ներքին առաջին փոխադրութեան տոմսերի վիճակահանութեան գլխաւոր գումարներն տարան հետևեալ բիլեթները.

№№ սերի	№№ բիլ.	Տարած գումարը.	№№ սերի	№№ բիլ.	Տարած գումարը.
7,874	17	200,000	14,638	28	Հ ա տ ո ւ ա ծ
8,963	46	75,000	13,837	35	
18,143	19	40,000	12,819	40	
16,433	17	25,000	16,151	45	
10,339	49	10,000-ական ր.	13,555	49	
19,855	11		14,650	33	
4,264	7		7,019	31	
777	33	8,000-ական ր.	12,374	29	
13,572	33		14,387	37	
18,975	44		4,134	2	
1091	44		4,179	48	
15,026	20		12,858	13	
15,097	40		11,580	22	
6,554	50		13,225	29	
19,115	8		4,071	11	
17,654	14	5,000-ական ր.	12,512	47	
12,360	34		7,137	20	
8,248	20		5,652	11	
11,844	44		1,225	39	
1,880	7		15,755	12	

3 Յուլիսի

ԼՕՆԴՕՆ. Լուրերին նայելով՝ Ֆրանսիոյ ֆինանսական պատգամաւորութիւնը կօնֆերէնցիայում Եգիպտոսի պարտքի տականները պակասեցնելուն ընդդէմ կանգնեց։

ՓԱՐԻԶ. Դեսպանատների պատասը Բեվելիօնի և Լագերդի՝ քաղաքական յանձնաժողովին ներկայացնելու մասին արած առաջարկութիւնը չ՚ընդունեց. սակայն նախագահ Գրեվին այգպիսիների պատիժը թեթևացնելու մասին մի

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

2 յուլիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Нов. Вр.» հաղորդում է, որ ֆինանսային մինիստրը արտասահմանից վերադառնալուց յետոյ՝ ուր նա գնացել է յունիսի 29-ին, պիտի այցել է Ռուսիոյ մի քանի տեղերը։

ՎԱՐՇԱՎԱ. Վիսլայի շրջակայ վեց նահանգներում հեղեղի վնասը գրեթէ չորս միլիոնի է հասնում և իսկապես աւելի է, քան դրա համար տուած օժանդակութիւնը, այնպէս որ աւելի վնաս կրողներից քչերին սահպուած պիտի տան ամեն մէկին երեք րուբլուց աւելի։

ԲԵՐԼԻՆ. Ռուսաց զօրքերի զօրահանդէսներին ներկայ լինելու համար ուղարկուում է գեներալ- լէյտենանտ Լեշչինսկին։

ՍՕՖԻԱ. Նոր մինիստրութիւնը վերջնականապէս կազմակերպուած է. նշանակուած են. — Կարաւելով—մինիստր-նախագահ և ֆինանսի, Զանովը—արտաքին գործերի, Սլաւէյկովը—ներքին գործերի, Ռօքօսլաւովը- արդարադատութեան և Կօրօլեվը-ազգային լուսաւորութեան. Հասարակական աշխատանքների մինիստրութիւնը փակվում է և ժամանակաւորապէս այդ մասը կը կառավարի Կարավելովը. ազգային ժողովի նախագահ ընտրուած է Ստամբուլովը։

ՓԱՐԻԶ. Երէկ ազգային ժողի ժամանակ՝ «Hotel Continental»-ի մօտով անցնող դիմնազիոնի աշակերտները նկատելով գերմանական դրօշակը՝ բարձր աղաղակներով պահանջեցին որ հեռացնեն նրան. դրանց հետ միանալով փողոցային երեխաները՝ պատռտեցին դրօշակը և կոտրատեցին հիւրանոցի լուսամուտի շրջանակները։ Ոստիկանութիւնը այդ յանդուգն երեխաներին հալածեց այդ տեղից։

ՄԱՐՍԷԼ. Այստեղ խոլերայից մեռան 64 մարդ և Տուլօնում—19։

ՕԴԵՍՍԱ. Այսօր, 24 ժամ քննուելուց յետոյ «Պետերբուրգ» նաւը 2003 ժողն առաջին տեսակի թէյ բեռնով մտաւ նաւահանգիստը։

ՆՕՎԴՕՐՕԴ, Հիւսիսային գաւառներում գրատների և ձիաների մէջ տարածուած է Սիմբիրսկի վերք կոչուած հիւանդութիւնը. եղել են և մարդկանց վարակուելու մի քանի դէպքեր, անասունների դիակները հողով ծածկելու անզգուշութիւնից։

ԼՈՒԿՕ. Հինգ գաւառներում գրատների մէջ տարածուած է Սիմբիրսկի վերք հիւանդութիւնը վարակվում են և մարդիկը. հիւանդացողների թիւը հաշուում են 27 հոգի, որոնցից 5 մարդ մեռել են։

ԱՍՏՐԱԽԱՆ. Այստեղ եկաւ «Կրասնօվօդսկ» շոգենաւը և իւր եռից կապած բերաւ Եման-Այրակլից եօթը առագաստաւոր շխունները, որոնք բեռնաւորուած էին բամբակով և մեսաքսով. Այրակլում մնաց 10 հազար փութ բամբակ. յաջող քամիների ժամանակ Մեօրտվի Կուլտուկում ազատ գնում են բամբակով բեռնաւորուած շխունները, բայց Կուննդրադում բեռնուածից՝ Բուդաչի թեթևկղզում վարձուած են 300 ուղտեր։

ՓԱՐԻԶ. Լրագիրները՝ քննելով երէկուայ Գերմանիայի գէմ ցոյցը ասում են, որ չի կարելի մեղադրել Կառավարութիւնը, որովհետև անող մարդիկը Հայրենասէրները չեն, այլ թեթևամիտներ են կամ ուրիշի գործիքներ։

ՄԱՐՍԷԼ. Այստեղ խոլերայից մեռան 64 մարդ և Տուլօնում—13.

ՍՕՖԻԱ. Արտաքին գործերի մինիստր նշանակուած է կ. Պոլսի նախկին դիպլօմատիկական գործակալ Յանկովը.

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

3 Յունիսի

Լօնդօն—24⅛, 24¼ Համբուրգ—206 ⅜, 207։ Փարիզ—254, 255։ Պօլուիմպերիալը—8 ր. 18 կ., Արծաթը—1 ր. 33¼։ Պետական բանկի 5% տոմսեր.—1-ին շրջանի—98 ր. ծախ., 2-րդ—96 ր. 12 կ., 3-րդ—96 ր. ծախ., 4-րդ—96 ր. 12 կ., 5—րդ—96 ր. Արևել. փոխառութեան 100 և 1000 րուբ. 5% տոմսեր. 1-ին շրջանի—93 ր. 37 կ., 2-րդ—93ր., 3-րդ—93¼ ր., Վիճակահանութ. 5% տոմսեր. 1-ին շրջանի—216 ¼ ր., 2-րդ—211 ր. ծախ.։ Նոր փոխառութիւնը—139½ ր. Պետերբուրգի քօրսային տրամադրութիւնը տմուր է։

Խմբագիրը—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԷԼԻ ՄԷԿ ԶՈՒՀ
ԿՕՄԻԴԻՒ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ
Հեղինակութիւն
Պարբիել Սուն դուկեանցի
գինն է 1 րուբլի.
Վաճառվում է Թիֆլիսում Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

ԼՈՒՅՍ ՏՍՍԱԻ
„ՎԱՐԺԱՐԱՆԻ“
№ 6.
ՀԵՏԵԻԵԱԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ
Ժառանգականութիւն կրթութեան համեմատութեամբ. — Ս. Մանդելեան։—Այժմեան դպրոցական կրթութեան վնասները.—Փ. Վարդանեան—Ուսուցչի կոչումը. Կուրսմանի,—Թարգ. Ա. Սպարապետեան—Դասաւանդութիւն.—Մ. Շահբնէրի. Թարգ. Գ. Շահրոզադեան—Բանասիրական՝ բնական գիտութեանց ունեցած յարաբերութիւնը գիտութիւնների ամբողջութեան հետ. Ճառ ալոփ. Հ. Հէյմհոլցի,—Թարգ. Աբելսողոմ Յովհաննիսեան և այլք.—Յայտարարութիւններ.
Խմբագիրը—Հրատար. Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

‹ԱՂԲԻՒՐ›

Լոյս տեսաւ № 7 (յուլիս) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 7

Ա. քաղաղ (առանաւոր)	Ս. Քամալեանց
Ա. զատիչ մակույկը	Զօկ
Թուփի տրտունջը	Ա.ղ. Սաեվան.
Հոկայ Մրջիւն (Տարաբնակութիւն)	Տ. Գիւլազեանց
Ս. բուռա (բանաստեղծութիւն)	Սրինգ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Բուսական աշխարհից (անմշակ ու մշակուած ծառի կեանքից) . . . . . Կ. Կ. Մ.-Շահ.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Զուկէյ անուանուած ցեղի մանուկները։
Մի քանի բան իրենց և կերակուր,

ՍՏԼ ԵՒ ՍՏԼՔ

Կապիկն ու շունը . . . . . Օր. Կ. Ասլան.
Մանուկ ճանապարհորդները։
Կոյր։

ՉՈՒԱՐՃԱԼԻՔ

Թուալանական խնդիր։ Հետաքրքիր թիւ։ Հանելուկներ։ Գեղջկուհին և տղաները։ Սէքափատուկի (մանկական խաղ)։ Շուտասելօվ։ Բերուններ։
Նախընթաց №№ 5-6-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը։

ՅՈՒՇԱՆՈՒԹԻՒՆ

Ջան գիւղում, ջան ծադիկ (ժողովրդական երգ նոտաներով)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ԱԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ·

«ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ ԳՆԱՑՔՆԵՐԻ ԳՆԱԼԸ ԵՒ ԳԱԼԸ

Փոստան գնում է Բաթում առաւօտեան	8	ժ.	31 րոպէի
„ գալիս է Բաթումից զիշերուայ	10	„	25 „
Ուղևորների և ապրանքների գնացքը գնում է Բաքու առաւօտ.	10	„	45 „
Բաքուից գալիս է կէսօրուայ	2	„	30 „
Շաբաթը մի անգամ ուղևորների և ապրանքների գնացքը վրացական ուղևորների արագ գնացքը.			
Բաքու գնում „ է երեքշաբթի երեկոյեան	10	„	58 րոպ.
Բաքուից գալիս է ուրբաթ առաւօտեան	7	„	53 „
Թիֆլիսից և Սուրամից մէջ			
Թիֆլիսից ուղևորների և ապրանքների գնացքը գնում է ցերեկ.	3	„	11 „
ուրբաթից „ „ գալիս է առաւօտեան	8	„	„ „

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го Іюля 1884 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի ա. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д. № 12.